

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/1

14 ապրիլի 2015 թ.

Քննարկվեց քաղաքացի Արզամ Մարտոյանի 31.03.2015 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 18.03.2015 թ-ի թիվ 944 որոշման դեմ:

Քաղաքացի Արզամ Մարտոյանի գանգատում բերված փաստարկները.

Արզամ Մարտոյանը (այսուհետ նաև գանգատաբեր) հայտնում է, որ 2014 թ-ի հունիս ամսին Արմավիրի ՏՀՏ-ից ստացել է ծանուցագիր, որի համաձայն մեկ տարվա ընթացքում երկու և ավելի տրանսպորտային միջոցներ օտարելու հետևանքով գոյացել է ավելացված արժեքի հարկ՝ գումարով 293.000 դրամ:

Գանգատաբերը բանավոր բացատրել է, որ վաճառել է իր մեքենան և այդ գումարով ձեռք է բերել նորը: Մեքենայում առկա թերությունների պատճառով, որոնք նախկին մեքենայի տերը թաքցրել էր, նույն օրվա պայմանավորվածությամբ մեքենան հետ է վերադարձվել նախկին տիրոջը: Գանգատաբերի կողմից կատարվել են գործարքից բխող բոլոր ձևակերպումները, որոնք կազմել են 80.000 դրամ:

Արմավիրի ՏՀՏ աշխատակիցը գանգատաբերից պահանջել է ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայությանից ներկայացնել համապատասխան փաստաթղթերը, ինչը և նրա կողմից կատարվել է:

Գանգատաբերը ՏՀՏ աշխատակցի թելադրանքով գրել է հայտարարագիր: Վերջինս հայտնել է նաև, որ իր կարծիքով խնդիրներ պետք է որ չառաջանան, քանի որ մեքենան մեկ օրվա ընթացքում հետ է վերադարձվել նույն անձին:

Սույն թվականի մարտի 26-ին գանգատաբերին հանձնել են գրություն, որի համաձայն իր չկատարված պարտավորությունը կազմում է 625.0 հազ. դրամ:

Գանգատաբերը հայտնում է նաև իր և իր ընտանիքի ֆինանսական ծանր վիճակի մասին:

Ելնելով վերոգրյալից՝ Գանգատաբերը խնդրում է հարցին տալ դրական լուծում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետը, քննարկելով քաղաքացի Արզամ Մարտոյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 12.03.2015 թ-ի դրությամբ նրա ԱԱՀ-ի գծով չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 625.217 դրամ, այդ թվում՝ ապառք 293.392 դրամ, տույժ 102.980 դրամ, տուգանք 228.845 դրամ: Պարտավորությունն առաջացել է Արզամ Մարտոյանի կողմից 08.04.2014 թ-ին իրականացված օտարման գործարքից, որից «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն առաջացել է բյուջե վճարման ԱԱՀ-ի պարտավորություն:

Արդյունքում ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Արմավիրի ՀՏ պետի կողմից 18.03.2015 թ-ին ընդունվել է թիվ 944 որոշումը (այսուհետ նաև Որոշում)՝ քաղաքացի Արզամ Մարտոյանից 625.217 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ Որոշմամբ քաղաքացի Արզամ Մարտոյանից 625.217 դրամ ԱԱՀ-ի գումար գանձման առաջադրելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ Ոստիկանության ՃՈ ծառայությունից ստացված տեղեկությունների համաձայն քաղաքացի Արզամ Մարտոյանը (ծնված 17.01.1988 թ-ին, անձնագիր AN 0464281) 2014 թ-ի ընթացքում վաճառել է թվով 2 (երկու) ավտոմեքենա: Մասնավորապես, Արզամ Մարտոյանի (վաճառող) և Վրեժ Վերդյանի (գնորդ) միջև 05.02.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Արզամ Մարտոյանը Վրեժ Վերդյանին է վաճառել «Volkswagen Golf» մակնիշի, 1995 թ-ի թողարկման ավտոմեքենա: Նշված պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «Volkswagen Golf» մակնիշի ավտոմեքենան Արզամ Մարտոյանին սեփականության իրավունքով պատկանել է 18.08.2012 թ-ից:

Այնուհետև, Արզամ Մարտոյանի (վաճառող) և Գրիգոր Շոլինյանի (գնորդ) միջև 08.04.2014 թ-ին կնքվել է «Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագիր», որի համաձայն Արզամ Մարտոյանը Գրիգոր Շոլինյանին է վաճառել «Alfa Romeo» մակնիշի, 1998 թ-ի թողարկման ավտոմեքենա: Այդ պայմանագրի 1.2 կետի համաձայն վաճառվող «Alfa Romeo» մակնիշի ավտոմեքենան Արզամ Մարտոյանին սեփականության իրավունքով պատկանել է 07.04.2014 թ-ից, իսկ պայմանագրի 2-րդ կետի համաձայն տրանսպորտային միջոցի գինը կողմերի գնահատմամբ կազմել է 1.760.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քաղաքացի Արզամ Մարտոյանի կողմից 08.04.2014 թ-ին կնքված Տրանսպորտային միջոցի առուվաճառքի պայմանագրով «Alfa Romeo» մակնիշի ավտոմեքենայի վաճառքը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն համարվում է ապրանքի մատակարարում, հետևյալ հիմնավորմամբ:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն. «Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից իրականացված գործարքները համարվում են ապրանքի մատակարարում հետևյալ դեպքերում՝

...

բ. մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ անձի սեփականությունը կամ ընդհանուր սեփականությունը հանդիսացող նույն տեսակի հետևյալ գույքի՝ բնակարանի, առանձնատան (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)), անձնական օգտագործման ավտոմեքենայի, գյուղատնտեսական նշանակության և բնակավայրերի հողերի, ավտոտնակի՝ որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց օտարման դեպքերում ապրանքի մատակարարում է համարվում այդ ժամանակահատվածում երկրորդ և ավելի թվով նույն տեսակի գույքի օտարումը, եթե օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում»:

Քննարկվող դեպքում քաղաքացի Արզամ Մարտոյանի կողմից իրականացվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի «բ»

Ենթակետով նախատեսված ապրանքի մատակարարման գործարք, այն է՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում երկու և ավելի թվով անգամ կատարվել է նրա սեփականությունը հանդիսացող ավտոմեքենաների օտարում, որոնցից երկրորդն օտարվել է դրա ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արմավիրի ՏՀՏ պետի 18.03.2015 թ-ի թիվ 944 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

